ՆԱԶԱՐ.– Գեադա , մի ուրիշ անգամ կանէիք: (Հազում է:) Ի՞նչ դրա ժամանակն էր:

ՀՍԿԱՆԵՐ.– Մեջտեղ բերէք Նազարի ձին, Թշնամիներն երեւացին:

ԺՈՂՈՎՈՒՐԴ.–

Ապրի մեր մեծ Քաջն Նազար,
Ո՞նց պիտ ջարդի հարիւր հազար:

Բոլորը զինուած շարժւում են աջակողմը: Հսկաները, բացի Ղոռոբուղայից, բարձրանամ են ամրոցի գլուխը; Հեռուից լսւում է փողերի ձայն: Ապա հետզհետէ զօրքերի գոռոց:

ՄՈՒՆԵՏԻԿ.– Զօրք է գալիս, պա՛հ, պա՛հ, պա՛հ, պա՛հ,

ՀՍԿԱՆԵՐ.– Զօրք է գալիս, վա՛հ, վա՛հ, վա՛հ վա՛հ:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Քաաջ Նազարը Էստեղ է, հա՞…

ՀՍԿԱՆԵՐ.– Փախչենք, ապեր, շա՛տ են, վա՛յ, վա՛յ:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Ո՞ւր էք փաախչում, շատն լակոտներ: Հոգինեե՛ոդ կիանեմ, հա՛: Քաաջ Նազարը կթողնի՞ որ փախչէք: Հա՛մմմ… Գուրզերդ ամուր բռնեցէք:

ՀՍԿԱՆԵՐ.– Մե՛ծ ապեր, արի տե՛ս, շատ են:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Բարձրանում է ամրոցը) Բո՛ո՛ո՛ո՛… Էէս ի՞նչ է: (Վայր իջնելով եւ ընկնելով Նազարի ոտները) Հա՛մմմ… Ամա՛ն, Քաաջ Նազար:

ՆԱԶԱՐ.– Ամա՛ն

ՀՍԿԱՆԵՐ.– (Նոյնպէս ընկնելով Նազարի ոտները) Ամա՛ն, Քաջ Նազար:

ՆԱԶԱՐ.– Ա՛ման (Առանց զէնքի դուրս է փախչում:)

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Ո՞ւր է գնում առանց զէնքի: Բռնեցէ՛ք,

ՀՍԿԱՆԵՐ.– (Բռնում են Նազարին եւ ետ բերելով զէնքեր են կապում նրա վրայ:)

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Բեերէք մեեր ձին: (Բերում են:) Նստեցէէ՛ք: (Նստեցնում են):

ՆԱԶԱՐ.– (Սաստիկ անհանգիստ է: Չորս կողմն է նայում, որ ճամփա գտնի փախչելու եւ երկիւղից հետզհետէ ինքն իրեն քաջալերելով ու սարսափի մէջ գլուխը կորցնելով) Ըըը՛: Կռիւ է: քեզ տեսնեմ, հայ հա՛ա՛ա՛յ:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Հիի՛մի, մաա՛տաղ, հիի՛մի, համբերի՛: